Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի ելույթը Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջահը Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակում գտնվելու կապակցությամբ /27.06.2015թ/

Սիրելի հայրենակիցնե՛ր, հյուրե՛ր,

Ողջունում եմ Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջահի մուտքը Արագածոտնի մարզ: Անցնելով մեր երկրի բազմաթիվ բնակավայրերով, արժանանալով հանրության սիրուն ու մեծարանքին, այսօր ջահը հանգրվանել է մարզկենտրոն Աշտարակ քաղաքում, ինչի համար շնորհավորում եմ բոլորիս:

Ինչպես այս ջահը, այնպես էլ Համահայկական խաղերն ամբողջությամբ խորհրդանշական երանգ ունեն: Դրանք արտահայտում են մեր ժողովրդի միասնությունը, մեկ գաղափարի շուրջ համընդհանուր մոտեցումներն ու ազգային արժանապատվության դրսեւորումները:

Համահայկական խաղերը առաջընթաց քայլ են Հայաստան-Արցախ- Սփյուռք կապի ամրապնդման ճանապարհին: Մարզական այդ տոնահանդեսի ընթացքում միասնական կյանքով են ապրում, հաղթանակներով հրճվում եւ ոգեւորվում աշխարհի բոլոր ծայրերում ապրող հայերը: Այս տեսանկյունից անչափ կարեւորում եմ Արեւմտյան Հայաստանի, ինչպես նաեւ Թուրքիայի հայաշատ վայրերից ժամանած մեր մարզիկների մասնակցությունը: Ուզում եմ ընդգծել, որ բոլորիս նպատակը մեկն է՝ միասնականությունը, եւ խաղերին մասնակցությունն արդեն իսկ հաղթանակ է: Համահայկական խաղերն այլեւս իրականություն են, եւ առաջիկայում դրանք ընդլայնելու, շրջանակները ընդարձակելու բոլորիս հաստատակամությունն ակնհայտ է:

Համահայկական խաղերի 6-րդ տարին համընկնում է Հայոց ցեղասպանության 100 ամյակին եւ ընդգրկված է այդ տարելիցի կապակցությամբ իրամանացվող ծրագրի շրջանակում: Ահա թե ինչպիսի կարեւորություն ունի մարզական այդ իրողությունը բոլորիս համար, եւ ինչպիսի պետական մոտեցում է ցուցաբերվում հանդեպ այդ իրադարձությունը:

Համահայկական խաղերն առանձնակի ուշադրության են արժանանում երկրի նախագահ Սերժ Սարգսյանի կողմից: Նրա մշտական հոգածությամբ եւ հետևողականությամբ է, թերեւս, պայմանավորված այն, որ տարեցտարի ավելանում է մասնակիցների թիվը, մեկ գաղափարի, միասնականության շուրջ համախմբելով առողջ ապրելակերպն ընտրած հանրությանը: Եւ պատահան չէ, որ եթե նախորդ խաղերում ընդգրկված էր մոտ 3200 մասնակից, ապա այս տարի նրանց թիվը ավելի քան 5000 է:

Համահայկական ամառային 6-րդ խաղերն աննախադեպ են ոչ միայն մասնակիցների քանակով, այլև քաղաքների աշխարհագրությամբ: Դրանք կանցկացվեն ինչպես Երևանում, Ստեփանակերտում, այնպես էր Գյումրիում, Վանաձորում, հանրապետության այլ քաղաքներում: Ընդարձակվել է նաեւ մարզաձեւերի քանակը: Նախկին տասը մարզաձևին՝ ֆուտբոլ, մինի ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, աթլետիկա, թենիս, սեղանի թենիս, շախմատ, բադմինթոն, լող, ավելացել է ևս յոթը՝ լողափնյա վոլեյբոլ, սպորտային պարեր, գոլֆ, հանդբոլ, բազկամարտ, հեծանվասպորտ և հրաձգություն: Այս բոլոր մարզաձեւերում հայազգի մարզիկները դրսեւորում են իրենց լավագույն կարողությունները, տարեցտարի գրանցում նոր հաղթանակներ, սահմանում ռեկորդներ:

Ինչպես Համահայկական ամառային նախորդ խաղերին, 6-րդին եւս իր ակտիվ մասնակցությամբ է ներկայանում Արագածոտնի մարզը: Մարզումների կազմակերպման ողջ գործընթացում մեր մարզիկները մշտապես արժանացել են մարզի ղեկավարության ուշադրությանն ու աջակցությանը: Այդ ամենը շարունակվելու է նաեւ առաջիկայում՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով համանման մեծածավալ միջոցառումներում լավագույնս ներկայանալու համար:

Սիրելի ներկանե՛ր, շնորհավորում եմ Համահայկական ամառային 6-րդ խաղերի կազմակերպման կապակցությամբ: Բոլոր մարզիկներին ցանկանում եմ մեծ հաղթանակներ, նորանոր ռեկորդներ եւ ձեռքբերումներ:

Իսկ ջահին մաղթում եմ բարի ճանապարհ՝ դեպի իր հիմնական հանգրվան: